Digitally signed by MARDANYAN ANNA 7302870411
Date: 2022.10.20 12:34:37 AMT

Հաստատում եմ՝

Տնօրեն՝ Ա. Մարդանյան «30» օգոստոսի 2022թ.

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ

ԴԱՍԱՐԱՆԻ ՂԵԿԱՎԱՐԻ

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ

ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Տավուշի մարզի

Նավուրի միջնակարգ դպրոցի I դասարանի դասվար՝

Նվարդ Արամի Չիլինգարյան

«2022-2023» ուսումնական տարի

1.Ներածություն /դասարանի ընդհանուր բնութագիրը/

Դասարանում կա 10 աշակերտ՝ 4 տղա և 6 աղջիկ: Բոլոր աշակերտներն էլ աշխույժ են և սիրով մասնակցում են դասերին: Տալիս են լրացուցիչ հարցեր: Մեկ աշակերտ կարիք ունի լրացուցիչ օգնության:

2.Ուսումնադաստիարակչական նախատեսվող աշխատանքներն ուսումնական տարվա ընթացքում

Անհրաժեշտ է առաջնորդվել նոր կրթական չափորոշիչներին համապատասխան ձևով: Պահպանել այն գաղափարը, որ աշակերտները պետք է սովորեն և կարևորեն գիտելիքը:

3.Հայեցի դաստիարակություն-

3.1.Հոգևոր դաստիարակություն

Մանկական տարիքում շատ կարևոր է հոգևոր դաստիարակության արժեքային համակարգի ձևավորումը, մշակութային ժառանգությունը փոխանցելու համար: Եվ որպես քրիստոնյա մեծացնելու համար ցուցադրել «Մանկական Աստվածաշունչ»ը նկարազարդումներով և բացատրել: Հոգևոր դասը մեզ հույս, ուժ, բարություն, ձգտում և կյանքի իմաստավորում ու արժևորում փոխանցող միջոց է: Պետք է հաշվի առնել տարիքային զարգացման առանձնահատկությունը՝ մտածողությունը, երևակայությունը, բարոյական ընկալումների զարգացման առանձնահատկությունը: Ինչ տեսնում սովորում են:

3.2.Գեղագիտական դաստիարակություն-

Որքան խորն է գեղագիտական ընկալումը՝ այնքան ամուր է մարդ-արվեստ, մարդ-բնություն կապը: Սերմանել գեղագիտական բարձր ճաշակի ընկալումը: Գեղագիտական դաստիարակությունը սերն ու հարգանքն է գեղեցկության նկատմամբ: Գնահատել իր շրջապատը և իրեն շրջապատող միջավայրն իր բոլոր «պարագաներով»:

3.3.Ռազմա-հայրենասիրական դաստիարակություն-

Շարունակել ազգային արժեքների պահպանման գաղափարի ընկալումը: Սովորեցնել այն պահպանելու և գնահատելու արժեքը: Սովորեցնել երգեր, պարեր՝ հաշվի առնելով տարիքային առանձնահատկությունները:

3.4. Ֆիզիկական դաստիարակություն-

Պահպանել օրվա ռեժիմը: Կազմակերպել շարժախաղեր, որն ամբողջությամբ կազմված լինի տարբեր բնույթի շարժումներից: Ակտիվ աշխատանքի մեջ է ընկնում երեխայի օրգանիզմը, բարելավվում է գլխուղեղի աշխատանքը, սրտի և շնչառության համակարգի գործունեությունը, ամրանում են հոդակապերը, ջլերը, մեծանում է ողնաշարի ճկունությունը, արագանում է նյութափոխանակությունը:

3.5.Աշխատանքային դաստիարակություն-

«Աշխատանքն է գեղեցկացնում մարդուն»: Երեխայի մեջ սերմանել օգնելու թե' մեծահասակներին, թե' երեխաներին: Ցուցադրել աշխատանքներ, որոնք կատարել են մեծահասակները՝այն գնահատել և ընդօրինակել:

3.6.Բնապահպանական դաստիարակություն-

Պատասխանատու լինել շրջակա միջավայրի նկատմամբ, պահպանել մաքրություն, հոգ տանել ամեն ծառի, թփի նկատմամբ: Հոգ տանել բույսերի, ծաղիկների նկատմամբ: Կարևորել նրանց բուժական նշանակության մասին:

4.**Դպրոց-ընտանիք կապը**-

Դպրոց-ընտանիք կապը պետք է ամուր և միասնական լինի: Ընտանեկան դաստիարակության գերագույն նպատակը մարդ կերտելու գործընթացն է, ոչ սոսկ իբրև ֆիզիկական գոյություն,այլ որպես բարոյական հատկանիշների ու առաքինությունների խտացում: Երեխան պետք է մեծանա սիրո, փոխհամաձայնության, հարգանքի մթնոլորտում, որն իր անշեղ ու անխախտ դրոշմը կդնի նրա հոգու ու սրտի վրա, նրա մեջ իսկական մարդ կերտելով:

ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ուսումնական շաբաթներ	Ուսումնադաստիարակչական աշխատանքի բովանդակությունը	Կատարման ժամկետը	Կատարողներ
1.	Գիտելիքի, գրի և դպրության օր	սեպտեմբեր	ԴԱԿ,դասղեկ
2.	Օրվա ռեժիմը	սեպտեմբեր	դասղեկ
3.	Անկախության անգնահատելի դերն ինձ համար	սեպտեմբեր	դասղեկ
4.	Ով է հետիոտնը	սեպտեմբեր	դասղեկ
5.	Զրույց «Մեր ընտանիքը»	հոկտեմբեր	դասղեկ
6.	Ուսուցի՛չ իմ թանկագին	հոկտեմբեր	աշակերտ, դասղեկ
7.	Մեր փողոցները	հոկտեմբեր	աշակերտ, դասղեկ
8.	Բարեկիրթ շփում, հաղորդակցում /անվտանգության ապահովում/	հոկտեմբեր	ԴԱԿ,դասղեկ
9.	Ինչու՞ է նոյեմբերը գույնզգույն	նոյեմբեր	աշակերտ, դասղեկ
10.	Հայաստանի Հանրապետության խորհրդանիշները	նոյեմբեր	աշակերտ, դասղեկ,ԴԱԿ
11.	Երկրաշարժի զոհերի հիշատակի օր	դեկտեմբեր	աշակերտ, դասղեկ
12.	Վարորդի աշխատանքը	դեկտեմբեր	աշակերտ, դասղեկ
13.	Կախարդական ձմեռ	դեկտեմբեր	աշակերտ, դասղեկ
14.	Նոր տարվա հանդես	դեկտեմբեր	աշակերտ, դասղեկ
15.	Հայոց բանակի տոն	հունվար	աշակերտ, դասղեկ
16.	Մենք գնում ենք դպրոց	փետրվար	աշակերտ, դասղեկ

17.	«Տյառնընդառաջի»/տոնի/ խորհուրդը	փետրվար	աշակերտ, դասղեկ,ԴԱԿ
18.	Նշել մայրենիի տոնը	փետրվար	աշակերտ, դասղեկ
19.	Զրույց «Բնության մասնիկն ենք»	մարտ	Դասղեկ,ԴԱԿ
20.	Կանանց տոն	մարտ	աշակերտ, դասղեկ
21.	Որտեղ կարելի է խաղալ	մարտ	աշակերտ, դասղեկ
22.	Իմ մտերիմ ընկերը	ապրիլ	աշակերտ, դասղեկ
23.	Մայրության, գեղեցկության տոն	ապրիլ	աշակերտ, դասղեկ
24.	Մենք ուղևորներ ենք /Կոդավորում, գաղտնազերծում/	ապրիլ	աշակերտ, դասղեկ,ԴԱԿ
25.	Մեծ Եղեռն	ապրիլ	աշակերտ, դասղեկ
26.	Մայիսի մեկը՝ ախատավորների տոն	ապրիլ	աշակերտ, դասղեկ
27.	Սովորում ենք պահպանել երթևեկության կանոնները	մայիս	աշակերտ, դասղեկ
28.	Մայիսի 9-ը՝ հաղթանակի տոն	մայիս	աշակերտ, դասղեկ
29.	Հեքիաթի աշխարհում	մայիս	աշակերտ, դասղեկ
30.	Ինչպես եմ անցկացնելու ամառային արձակուրդը	մայիս	աշակերտ, դասղեկ